Բարշամինայ» մեհեանը[1], գտնուում էր միւս սահմանակից Դարա-նագեաց գաւառի Թորդան գիւղում, որի հնագոյն անունն է Մէր-բոգան[2], որով եթէ Բարշամինան և Միհրը նոյնացած չհամարենք, պէտք է յամենայն դէպս ընդունենք, որ Թորդանում ևս Միհրի պաշտամունք է եղել։ Աշտիշատի և Երիզայի «ոսկեմայր» Անահիտների մէջ ևս կարող է ծագած լինել առաջնութեան կամ գերիշխանութեան վէճ, ինչպէս որ այդ իրօք տեղի է ունեցել Երիզայի Հայոց քուրմերի և Պոնտոսի ու Կապադովկիոյ «Ոսկէ Կոմանայի» Անահտի քուրմերի մէջ ըստ Պրոկոպիոսի[3]։ Այս հաւանական է և այն պատճառով, որ մինչդեռ Երիզայի Արտեմիս—Անահտի և Աշտիշատի Սֆրոդիտէ-Աստղիկի, Թիլի Աթենաս-Նանէի,

---

Դարեջան անունը մեր Դերջանն է։ Նորա ազգանունն է։ ինչպէս Մ. Խոնելուց ևս երևում է։ Դարեջանեանի։ որից հետևեցրել են հօր անունը։ ինչպէս եւ մեր Մամիկոնեանց պէս ճանական-Լազական ծագումն ունեցող նախարարութիւնը իւր ազգանունը։ Օրբէլի կամ Օրբէլեանի, ստացել է Օրբէլ բերդից։ Վրաց վէպն ուղում է ասել, որ իւր Ամերան-Միհրը Դերջանի Միհրն է։ Դ-ջանի առաջին վանկի — եթէ իւր նախնականը չէ։ կարող էր Դ-ջանազիրի ազդեցութեամբ ևս փոխուել։ որտեղի այժմ մնացած երկու Բագրատիոն գիւղերը։ եթէ հնում Միհրի տաճարներ չունենային էլ, կարող էին շփոթուել Դերջանի համանուն Բագրատիոնի հետ։ Վրաց վէպի Կեկլուց կեսարը։ այսինքն Թագաւորը, հաւանօրէն մեր Եկեղեաց գաւառն է։ Մենք մի այլ տեղում դիտել ենք ենք։ որ Զոջանց վէպի Գօրգիզը վրացի Գէորգն է։ Համիզը՝ Ռուզուգանի դեսպանը (Արարատ Ամս. 1906։ ապրիլ։ էջ 557)։ այժմ պէտք է աւելացնենք։ որ հենց նոյն փոփոխակի Սրգօն [«Սրգոյի (սուրբ Սարգսի) ջորդերուցն է» (№ 1։ Է։ էջ 21] ոչ թէ Ս. Սարգիսն է։ ինչպէս կարծում է Սրուանձտեանը։ այլ Մխարգրձելի—Երկայնաբազուկ Սարգիսը։ որ միայն կարող էր իբրեւ Վրաց ազնուական նորտեր ունենալ, մանաւանդ որ «Մխարգրձելի ինը եղբայրներ» վրաց ժողովրդական Ամերան վէպում ևս յիշուումեն, որոնցից Սարգիսը, Զաքարիան եւ Իվանէն Թամարայ Թագուհու զօրավարներն էին (А. С. Хахановъ, Очерки по Ист. Грузин. слосесности I, էջ 25, Москва 1895)։ Բայց մենք վրաց այս եւ մեր Զոջանց վէպին կը դառնանք ուրիշ անգամ առանձնապէս։

1. Ագաթան. ՃԺ, § 790. ՃԹ. § 784։

2. Н. Марръ, Крещеніе Армянъ, Грузинъ, Абхазовъ и Алановъ, Арабская версія, էջ 119 Оттискъ изъ «Записокъ восточн. отдѣл. Имп. Русск. Археолог. Общ. томъ XVI. С.-Петербургъ 1905:

3. Hoffmann, Auszüge, 4, էջ 135: Ա. Մ. Դարագաշեան Քննակ. Պատմ. Հայոց. Բ. Թ. § 15, էջ 158—161. Թիֆլիս, 1895։